Պարույր Սևակ

Փնտրումներ

Երգի ստեպում հազար շավիղներ,
Հազար արահետ, ճամփաներ բազում,
Ինչքա՜ն սեգ քնար, քանի՜ տավիղներ,
Ինչքա՜ն հնչյուններ, մտքեր երազուն:
Բայց այդ բազմուղի լաբիրինթոսում,
Ուղիներում այդ հեշտին ու դժվար
Ընկած երգերի հերկած ակոսում,
Դարձըրել եմ ինձ խոհերի ավար,
Խոհերի առաջ՝ թեքած պարանոց,
Խոհերի առաջ՝ մի նվաստ հոգի,
Խոհերի առաջ՝ խեղճ ու վարանոտ,
Խոհերի առաջ՝ բարդ ու անմեկին...
Կյանքն էլ է այդպես անընդգրկելի...
Նրա սկիզբը - բազմատրոփյուն,
Ներկան - մահվան պես հար, անհերքելի,
Նրա առօրյան - պայքար ու կոփում:
Կյանքն էլ է այդպես դժվար ու հեշտին
Վերխոյացումով, վարիջումով լի.
Կյանքն էլ ողջույնի և հրաժեշտի
Համբույրներով է անիմանալի:
Կյանքն էլ է նրբին, կյանքն էլ պահանջկոտ,

Կյանքը կարոտ է իր երգը լսել,
Կյանքը - պճնված, բայց նաև բոկոտն,
Կյանքը - մշուշոտ, կյանքը - վառ, լուսե...
Ու այդ կյանքն ահա ինչպե՞ս ընդգրկել,
Ծավալը չափել երգի մենզուրով...
Երգերը՝ գրված երգերից գրքե,
Կարո՞ղ են միթե անձրևաջրով
Օծանել կյանքի դեմքը բազմանիստ,
Պատկերել նրան... ողողանջը գոնե
Որպես ցոլք ու փայլ սրփռել հանգիստ,
Որպես եղածի նկար անգունեղ
Մատներով վարպետ լավ ուրվագծել,
Այնպես, որ կյանքը չըայլանդակվի,
Որ չըխառնվեն բծեր ու գծեր
Եվ կյանքն անկաշկանդ, գեթ չըվանդակվի...
Ու դրա համար իմ մանուկ հոգով,
Իմ անվարժ գրչով, թույլ ուժերով իմ,
Իմ հայրենիքի երկնքի ներքո
Պիտի երգեմ նորը բոլորովին:
Պիտի կաշկանդված իմ հոգին սուրա,
Ինչպես հողմը խենթ փոթորկի ժամին,
Թափառի անհաս եզերքի վրա,-
Պայծառ գալիքի սեգ ճանապարհին:
Պիտի իմ երգը ծնվի կյանքի մեջ,
Կյանքի գրկի մեջ... Կյանքից գոյացած
Պիտի որ դառնամ կյանքի բանաստեղծ,
Կյանքի զորությամբ բարձր խոյացած:
Ու դրա համար ծառանամ պիտի
Հին անեծքային օրենքների դեմ,
Որ երգս կապի ծիածան-գոտի,

Որ հոգիս դառնա խնդության եղեմ:
Ու պիտի շուռ տամ գլուխս հպարտ
Բյուր ճամփաներից, շավիղներից բյուր,
Ինչպես աքսորից փախած թիապարտ՝
Թափառումներին տամ հազար համբույր...
Պիտի ջարդոտեմ ամեն մի կապանք,
Ամեն մի շղթա՝ հոգիս կաշկանդող,
Որ կյանքը երգիս մեջ էլ մնա կյանք,
Որ չլինեն տողեր՝ խոհերիս բանտող...
Եվ ահա հոգիս այս հուզումով լի
Կանգնած է ահա լուռ ու վարանոտ
Բյուր ճամփաներում անիմանալի,
Քայլելու համար գեթ ուղու կարոտ...
Կանգնած է նա լուռ... Ու չի ընտրի նա
Բյուր ճամփաներից ո՛չ մի արահետ,
Այդ ճամփաներից և ոչ մի ճամփա,
Չի ձուլի նրան վառ գալիքի հետ:
Ու կանգնած է նա... կուրծքը բաց արած
Անհայտ կողմերից եկող հողմերին,
Թափառող ու սուր հայացքը հառած
Դեռ անտես, անգո, վեհ ճանապարհին...
...Հին ճամփաների լաբիրինթոսում,
Որպես գնացող անտես իոններ,
Տենչանքներն իմ, արդ, հեռու են հոսում,
Իսկ ես, որպես մի խիզախ պիոներ -
Ձեռքիս գրիչ մի՝ դեռ անփորձ, անվարժ,
Հոգուս մեջ - ձգտում, գլխիս մեջ - խոհեր,
Որպես շեփորման մի նոր Բեթհովեն:
Իսկ եթե հանկարծ հրացանը իմ
Դեռ չընկրակած անօգուտ պարպի,

Թող այս երգը իմ՝ հոգուս մտերիմ,
Դառնա իմ հոգու երգը կարապի...